



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ
ՀԻՄՆԻՍԱՅԻՆ ԱՍԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ
WESTERN PRELACY

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

Archbishop Moushegh Mardirossian, Prelate

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745, E-mail: Prelacy@aol.com



ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՍ ԸԼԼԱԼՈՎ ԱԶԳ. ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ՆՈՐ ՇԵՆՔԻՆ ՍԷՋ
ԳՈՒՄԱՐՈՒՄԾ ԻՐ 34-ՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻՆ

ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ ԱԶԳ. ԵՐԵՍՓՈԽԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎԸ
 «ՅՈՅԺ ԳՆԱՅԱՏԵԼԻ» ԳՏԱԲ ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆ ՀՕՐ,
 ԿՐՕՆԱԿԱՆ ԺՈՂՈՎԻՆ ԵՒ ԱԶԳ. ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ

- **ԺՈՂՈՎԸ ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆԸ ՇՆՈՐՀԱԽՐԵՅ ԶԵՈՆԱԴՐՈՒԹԵԱՆ**
30-ԱՄԵԱԿԻՆ ԵՒ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ 10-ԱՄԵԱԿԻՆ ԱՌԻԹՈՎ
- **ԸՆՏՐՈՒԹԻՒՆ ԱԶԳ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ՊԱՏԳԱՄԱԽՐՆԵՐՈՒ,**
ԿՐՕՆԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ՈՒ ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՆՈՐ ԿԱԶՄԵՐՈՒՆ

Արեւմտեան մեր թեմի աւանդութեան համաձայն, Ազգային Երեսփոխանական Ժողովը իր ընթացիկ նստաշրջանը կը գումարէ ամէն տարուան Մայիսի երրորդ շաբաթավերջին:

Արդ, հաւատարիմ մնալով այս աւանդութեան, Ազգային Երեսփոխանական Ժողովը իր 34րդ նիստը գումարեց Ուրբաթ, 19 Եւ Շաբաթ, 20 Մայիսին, Ազգային Առաջնորդարանի նոր շէնքի «Տիգրան Եւ Չարուհի Տէր Ղազարեան» սրահին մէջ, նախագահութեամբ թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեանի եւ մասնակցութեամբ Երեսփոխանական կազմի մեծամասնութեան, ինչպէս նաեւ Ազգային Վարժարաններու Խնամակալ Մարմինի ներկայացուցիչներու, տնօրէններու եւ ծխական շրջաններու հոգաբարձութեանց կազմերէն հրաւիրեալներու: Վերջիններուն շարքին էին նորակազմ երեք ծուխերուն՝ Ռիվըրսայտի, Քրեսենթա Հովիտի եւ Լաս Վեկասի ծխական յանձնախումբերու ներկայացուցիչները:

Ժողովը ընթացաւ չորս նիստերով:

Առաջին նիստը բացուեցաւ Ուրբաթ, 19 Մայիսի կէսօրէ ետք ժամը 3ին: Նկատի ունենալով, որ Ազգ. Երեսփոխանական Ժողովը առաջին անգամ ըլլալով կը գումարուէր Ազգ. Առաջնորդարանի նոր շէնքին մէջ, հիւրընկալութեամբ Ս. Սարգիս Եկեղեցւոյ, Առաջնորդ Սրբազանը յայտարարեց, թէ պաշտօնական բացումը պիտի կատարուի տնօրինեքի արարողութեամբ: Ապա, աղօթք մատուցուեցաւ մեր ննջեցեալներուն եւ յատկապէս նորոգ հանգուցեալ Տ. Ղեւոնդ Արք. Չեպէեանի ու

Ազգ. Առաջնորդարանի սոյն սրահի բարերարներուն՝ Տիգրան եւ Չարուհի Տէր Ղազարեան ամուլի յիշատակին:

Առժամեայ դիւանի ատենապետ ընտրուեցաւ երիցագոյն անդամ Տիար Հայկ Պոսթանեան, իսկ ատենադպիր՝ կրտսերագոյն անդամ Հոգշ. Տ. Պարթեւ Վրդ. Կիլիկմեան:

ՎԵՐԱՓՈՒ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ՊԱՏՎԱՄԸ

Գերայ. Տ. Միւռն ծ. Վրդ. Ազնիկեան ընթերցեց Մեծի Տանն Կիլիկիոյ գահակալ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսի օրհնութեան խօսքը, ուղղուած՝ Առաջնորդ Սրբազանին եւ Ազգ. Երեսփոխանական ժողովին: Իր գիրին մէջ, Վեհափառ Հայրապետը գնահատանք կ'արձանագրեր Առաջնորդ Սրբազանին ու ժողովականութեան տարած աշխատանքներուն, որոնց ականատես վկան էր եղած անցեալ Հոկտեմբերին՝ Հոփուապետական իր այցելութեան առիթով, ապա նաեւ յաջողութիւն կը մաղթեր այս ժողովի աշխատանքներուն:

Այնուհետեւ, յաջորդաբար ողջոյնի խօսքեր արտասանեցին Ազգ. Կեդրոնական Վարչութեան անդամ Տիար Խաժակ Տիքիճեան, Ազգային Վարչութեան ատենապետ Տիար Հրայր Պալեան եւ 34րդ նստաշրջանի հիւրընկալ Ս. Սարգիս եկեղեցւոյ ատենապետ Տիար Սարգիս Թաթիկեան:

Տիար Խաժակ Տիքիճեան գնահատանքով արտայայտուեցաւ Առաջնորդ Սրբազան Հօր, Կրօնական ժողովին ու Ազգային Վարչութեան հսկայական աշխատանքին մասին, որ տարուած է անցեալ տարուան ընթացքին, ինչպէս ցոյց կու տան ժողովի անդամներուն տրամադրուած տեղեկագիրները, սակայն նաեւ նկատել տուաւ, որ մեր ազգային կեանքին աշխատանքի դաշտերը կ'ընդարձակուին արագօրէն, որուն համար յառաջիկայ կազմերէն կը սպասուի յաւելեալ ճիգ: Ան յաջողութիւն մաղթեց սոյն ժողովին:

Տիար Հրայր Պալեան հակիրճ կերպով անդրադարձաւ անցեալ մէկ տարուան բեղուն աշխատանքներուն, որոնց գագաթնակէտը եղաւ Վեհափառ Հայրապետին հովուապետական այցելութիւնը: Ան յայտնեց, թէ արձանագրուած յաջողութիւններուն մասնակից եղան մեր Թեմի բոլոր ծխական շրջաններն ու բարեկամները, որոնց ուղղեց շնորհակալութեան խօսք: Ան այս առիթով շնորհակալութեան խօսք ուղղեց Առաջնորդ Սրբազանին, Ազգ. Վարչութեան բոլոր անդամներուն ու գործակիցներուն, եւ յանուն Ազգ. Վարչութեան՝ յաջողութիւն մաղթեց սոյն ժողովին:

Տիար Սարգիս Թաթիկեան յանուն իր ծխական շրջանի հովիւին եւ հոգաբարձութեան, գոհունակութիւն արտայայտեց որ այս նստաշրջանին հիւրընկալումը վստահուած է Ս. Սարգիս եկեղեցւոյ:

ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ՊԱՏՎԱՄԵՑ ԱՌԱՒԵԼ ՉԱՐԿ ՏԱԼ ԳՈՐԾԱԿՑՈՒԹԵԱՆ

Տիար Ատենապետը հրաւիրեց Առաջնորդ Սրբազանը՝ տալու իր պատգամը:

Առաջնորդ Սրբազանը նախ եւ առաջ ողջունեց բոլոր ներկաները եւ փառք տուաւ Աստուծոյ, աշխատանքի ամբողջացող տարուան համար, ապա գոհունակութեան եւ երախտագիտութեան զգացումներով անդրադարձաւ Վեհափառ Հայրապետի Հոփուապետական այցելութեան ու անոր հոգածու

վերաբերմունքին մասին: Ան վստահութիւն յայտնեց, որ այս ժողովը արժանի գնահատականը պիտի կատարէ տարուած աշխատանքներուն ու յառաջիկային եւս, պիտի շարունակէ գործակցիլ նորընտիր Կոստական ժողովին ու Ազգային Վարչութեան հետ: Առաջնորդ Սրբազանը նկատել տուաւ, որ Վեհափառ Հայրապետին այցելութեան ու Առաջնորդարանի շէնքի բարեփոխման իրագործումները արդիւնք էին ոչ միայն անհատական աշխատանքներու, այլ նաեւ մեր բոլոր ծխական շրջաններու եւ բարերարներու համատեղ գործակցութեան, որուն համար ան գնահատանք ուղղեց բոլորին: Ան յատուկ կարելորութեամբ վեր առաւ Ազգ. Առաջնորդարանի յարկին տակ տարուող Զրիստոնեական Դաստիարակութեան աշխատանքները, ինչպէս նաեւ Թեմիս ընտանիքին միացած ծխական երեք նոր շրջանները, այսպէսով, մեր թեմական աշխատանքները կը ստանան նոր ծաւալ: Ան համոզում յայտնեց, որ յառաջիկայ աշխատանքները եւս շարունակուին յաւելեալ գործակցութեամբ ու նուիրումով, դէպի նորանոր յաջողութիւններ առաջնորդելով մեր Թեմը:

Առաջնորդ Սրբազանը եզրափակեց յաջողութիւն մաղթելով ժողովին, որ օրակարգի բոլոր բաժինները լուծէ կատարեալին ձգտելու նախանձախնդրութեամբ, ինչպէս նաեւ հոգածու մօտեցում ցուցաբերելու յատկապէս ուսումնական ու դաստիարակչական աշխատանքներու կալուածներուն, մանաւանդ, որ Վեհափառ Հայրապետը 2006 տարին հռչակած է Հայ Դպրոցի Տարի:

Տեղի ունեցաւ մնայուն դիւանի ընտրութիւնը: Միաձայնութեամբ ատենապետ ընտրուեցան Տեարք Տոքթ. Կարօ Յակոբեան եւ Ռուբիկ Կիրճեան, իսկ ատենադպիր՝ Հոգշ. Տ. Պարթեւ Վրդ. Կիւլիւմեան եւ Տիար Համօ Գասպարեան:

Օրակարգի որդեգրումէն ետք, տեղի ունեցան ժողովի զոյգ յանձնախումբերու ընտրութիւնները. միաձայնութեամբ Բանաձեւի Յանձնախումբ ընտրուեցան Գերպ. Տ. Միւռն Ծ. Վրդ. Ազնիկեան, Տեարք Հայկազ Թրթռեան եւ Վարդան Միւսսեան, իսկ Զուեախոյզ Յանձնախումբ ընտրուեցան Տեարք Արա Ճիւրեան, Տաճատ Երեցեան եւ Յարութիւն Պէշլեան:

Ա. Նիստի փակումէն առաջ, ծխական շրջաններու հոգաբարձութեանց եւ նորակազմ շրջաններու ներկայացուցիչները տուին հակիրճ գեկուցումներ՝ իրաքանչիւր շրջանի աշխատանքներուն մասին:

ՅՈՒՇԱՆՈՒԵՐ՝ ՏԻԱՐ ՎԱՅԱՆ ՊԶՏԻԿԵԱՆԻՆ ԵՒ...

Երեսփոխանական ժողովի Բ. նիստը բացուեցաւ երեկոյեան ժամը 6:30ին:

Օրակարգի լուծման անցնելէ առաջ, Առաջնորդ Սրբազանը խօսք առնելով յիշեցում կատարեց, որ Ազգ. Երեսփոխանական ժողովներու առիթով, բարի աւանդութիւն մը ստեղծուած է պատուել նուիրեալ ու ծառայող անձնաւորութիւններ: Անցեալ տարիներուն, այս նպատակով յուշանուէրներ տրուած են Տոքթ. Յակոբ Տեր Մկրտիչեանի ու Գրիգոր Եղբայր Մսրրլեանի: Ան յայտնեց, որ այս տարի Ազգ. Վարչութիւնը որոշած է յուշանուէրով մը պատուել Ազգ. Առաջնորդարանի շէնքի յանձնախումբի ատենապետ Տիար Վահան Պզտիկեանը, որ Ազգ. Վարչութեան անդամակցութենէն առաջ իսկ, ու մինչեւ այսօր, բոլորանուէր կերպով նուիրուած է Ազգ. Առաջնորդարանի նոր շէնքի բարեփոխման աշխատանքներուն: Առաջնորդ Սրբազանը հրաւիրեց Ազգ. Վարչութեան ատենապետ Տիար Հրայր Պալեանը, որպէսզի միասնաբար կատարեն յուշանուէրի տուչութիւնը:

Տիար Վ. Պզտիկեան շնորհակալութեան խօսք ուղղեց այս անակնկալին համար, նշելով, որ զայն կ'ընդունի յանուն յանձնախումբի բոլոր նուիրեալներուն:

...ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐՔԱԶԱՆԻՆ

Դիւանը հրաւիրեց Գերպ. Տ. Միւռն Ծ. Վրդ. Ազնիկեանը, որպէսզի արտասանէ սրտի խօսք մը: Հայր Սուրբը յայտնեց, թէ երեսփոխանական այս ժողովը կը զուգահիսի այն պահուն, երբ Թեմիս Առաջնորդ Սրբազանը կը բոլորէ կուսակրօն քահանայ իր ձեռնադրութեան եւ օծման 30-րդ, եւ Թեմիս Առաջնորդութեան 10-րդ տարեդարձները: Ան հակիրճ կերպով անդրադարձաւ Առաջնորդ Սրբազանին ծառայական կեանքին ու բոլորին անունով փոխանցեց շնորհաւորութիւններ ու բարեմաղթութիւններ: Ան յիշեցուց, որ Հինգշաբթի երեկոյ, Թեմիս Հոգեւորականները, Հոգաբարձութեանց ու Տիկնանց Միութիւններու համագումարին, իբրեւ երախտագիտութեան արտայայտութիւն՝ պանակէ մը նուիրած են Առաջնորդ Սրբազանին, իսկ այժմ, Ս. Նահատակաց եկեղեցւոյ երեսփոխաններէն Տիար Ղազարոս Ղազարոսեան յանուն Ազգային երեսփոխանական ժողովին, Առաջնորդ Սրբազանին կը նուիրէ ականակուռ մատանի մը:

Այս առիթով, սրտի խօսքեր արտասանեցին, Առաջնորդ Սրբազանը շնորհաւորեցին ու անոր նորանոր յաջողութեան մաղթանքներ փոխանցեցին Ազգ. Վարչութեան ատենապետ Տիար Հրայր Պալեան ու Ազգ. Կեդրոնական Վարչութեան անդամ Տիար Խաժակ Տիքիճեան: Առաջնորդ Սրբազանը շնորհակալութիւն յայտնեց բոլորին եւ յատկապէս Տիար Ղազարոս Ղազարոսեանին, եւ յոյս յայտնեց, որ ինք հաւատարիմ կը մնայ իր ուխտին: Ան գնահատանքով արտայայտուեցաւ այն գործակցութեան մասին, զոր գտած է Թեմիս ժողովականութեան մօտ, եւ մաղթեց, որ մեր Թեմին եկեղեցիները բազմանան, իսկ Հայ Դպրոցի Տարուան առիթով՝ մեր Թեմը ունենայ նաեւ նոր երկրորդական վարժարան մը:

Այնուհետեւ, Ազգ. Վարչութեան գանձապահ Տիար Վահան Պզտիկեան ներկայացուց հաշուական տեղեկագիրը, որուն մասին տուաւ որոշ լուսաբանութիւններ: Տիար Կարօ Յակոբեան ընթերցեց Հաշուեքննիչ Յանձնախումբին տեղեկագիրը, որ կը բովանդակէր նաեւ որոշ առաջարկներ ու յանձնարարականներ:

Ազգ. Վարժարաններու Խնամակալ Մարմինի լրացուցիչ գեկուցումը ներկայացուց Մարմինին ատենապետուհին՝ Տոքթ. Ռուբինա Փիրումեան: Ան գոհունակութեամբ անդրադարձաւ նոր երկրորդական վարժարանի մը ծրագիրին համար Ազգ. Բարերար Տիար Խաչիկ Սուրատեանի նուիրատուութեան ու անով բացուած հորիզոններուն, Յեղասպանութեան ուսուցման համար պատրաստուած նոր դասագիրքին ու հայերէն լեզուի դասաւանդման աշխատանքներուն, ինչպէս նաեւ հայերէն դասաւանդող ուսուցիչներու վերադարձաւորման ծրագիրներուն՝ գործակցաբար բարձրագոյն ուսմանց հաստատութիւններու: Մարմինին աշխատանքները կ'ընդգրկեն նաեւ մեր վարժարաններու աշակերտութեան սննդառութեան որակի հսկողութիւնը, ինչպէս նաեւ աւարտական դասարաններու աշակերտներուն Հայաստան այցելութեան կազմակերպումը:

Խնամակալ Մարմինի գանձապահ Տիար Աւօ Զէշիշեան գեկուցում տուաւ Մարմինի հաշուական աշխատանքներուն ու ծրագիրներուն մասին:

Ժողովը Տիար Ռուբիկ Կիրճեանէն հակիրճ զեկուցում մը լսեց CASPSի (հանրային վարժարաններու հայ աշակերտներու հարցերով զբաղող յանձնախումբ) աշխատանքներուն ու նորագոյն ծրագիրներուն մասին:

Կրօնական ժողովի եւ Ազգ. Վարչութեան ատենադպիրները լրացուցիչ զեկուցումներ տուին վերջին շաբաթներու աշխատանքին մասին: Ժողովականներու հարցումներուն հիմամբ, տրուեցան լուսաբանութիւններ:

Մեկնելով տեղեկագիրներէն ու զեկուցումներէն, եւ յետ ըստ ելութեան քննարկման եւ եզրակացութեան՝ ժողովը «յոյժ գնահատելի» բանաձեւ մը որդեգրեց Առաջնորդ Սրբազանին, Կրօնական ժողովին ու Ազգային Վարչութեան բազմաճիւղ իրագործումներուն մասին:

ԱԶԳ. ԸՆԴ. ԺՈՂՈՎԻ ՊԱՏՊԱՄԱԴՐՆԵՐՈՒ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ

Նկատի ունենալով, որ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Ազգ. Ընդհանուր Ժողովը նախատեսուած է յառաջիկայ Զոկտեմբերին, Երեսփոխանական Ժողովը օրակարգի վրայ ունէր մեր Թեմի պատգամաւորներու ընտրութիւնը: Ազգ. Ընդհանուր Ժողովին, մեր Թեմէն պիտի մասնակցին 15 պատգամաւորներ: Զետեւաբար, ժողովը պետք էր ընտրէր 15 պատգամաւորներ եւ 3 փոխ անդամներ:

Լիազօր պատգամաւոր ընտրուեցան հետեւեալ ազգայինները.-

Տեարք Խաժակ Տիքիճեան, Զրայր Պալեան, Արման Քեօսեան, Բեգլար Փիլաւճեան, Տոքթ. Յակոբ Տէր Սկրտիչեան, Վահան Պզտիկեան, Կարպիս Պեզճեան, Պողոս Սասունեան, Յակոբ Ետալեան, Կարօ Աւագեան, Նուպար Տեմիրճեան, Տոքթ. Յակոբ Տիգրանեան, Տոքթ. Կարօ Յակոբեան, Խաչիկ Երեցեան եւ Մարք Սրկ. Շիրին: Իսկ փոխ անդամ ընտրուեցան Տեարք Գրիգոր Սիւլահեան, Սարգիս Կիսցիւնեան եւ Վարդան Միլասեան:

Նիստը փակուեցաւ ժամը 10:15ին:

ԸՆՏՐՈՒԹԻՒՆ ԿՐՕՆԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ՈՒ ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

Ազգային Երեսփոխանական Ժողովի նստաշրջանը շարունակուեցաւ Շաբաթ, 20 Մայիսի առաւօտուն եւ երկու նիստերով երկարեցան մինչեւ յետմիջօրէի ժամը 3:

Քննարկուեցան Ազգային Վարժարաններու Կանոնագիրի վերամշակման հարցը, ապա նաեւ արձանագրուեցան յառաջիկայ կազմերու գործունեութեան համար առաջարկներ ու թելադրանքներ: Այս ծիրին մէջ, վաւերացուեցաւ յառաջիկայ պիտոճէի նախագիծը: Որոշուեցաւ չորս ամիս ետք գումարել Ազգ. Երեսփոխանական Ժողովի արտակարգ նիստ մը, ամբողջացնելու համար Ազգ. Վարժարաններու Կանոնագիրին վերամշակումը:

Այնուհետեւ, ժողովս անցաւ Կրօնական Ժողովի եւ Ազգային Վարչութեան նոր կազմերու ընտրութեան օրակարգին:

Զայր Միւռն Ազնիկեան ներկայացուց Կրօնական Ժողովէն բխած թեկնածուներու ցանկը, որ որդեգրուեցաւ միաձայնութեամբ եւ ձեռամբարձ քուէարկութեամբ: Կրօնական Ժողովի անդամ ընտրուեցան հետեւեալ հոգեւորականները.-

Գերպ. Տ. Միւռն Ծ. Վրդ. Ազնիկեան, Զոգշ. Տ. Պարթեւ Վրդ. Կիլիւմեան, Արժ. Տ. Արժ. Տ. Կոմիտաս Քիւնյ. Թորոսեան, Վահան Քիւնյ. Կոստանեան, Արժ. Տ. Վազգէն

Քինյ. Աթմաճեան, Արժ. Տ. Ռազմիկ Քինյ. Խաչատուրեան եւ Արժ. Տ. Արտակ Քինյ. Տեմիրճեան:

Իսկ Ազգային Վարչութեան անդամ ընտրուեցան հետեւեալները.-

Տեարք Պողոս Սասունեան, Տոբթ. Յակոբ Տէր Մկրտիչեան, Կարպիս Պեզճեան, Վահան Պզտիկեան, Կարօ Աւագեան, Կարօ Յակոբեան, Տոբթ. Նաւասարդ Գազազեան, Ներսէս Մելքոնեան, Վահէ Յովակիմեան, Վարուժան Տէր Սիմոնեան եւ Սիեր Տէր Յովհաննէսեան:

Հաշուեքննիչ Յանձնախումբի անդամ ընտրուեցան Տեարք Ռուբիկ Կիրճեան, Կարօ Էշկիեան եւ Չարեհ Մարգարեան:

Տիար Կարօ Յակոբեան դիւանին անունով շնորհակալութեան խօսք ուղղեց ժողովին ու յաջողութիւն մաղթեց նորընտիր կազմերուն:

Նստաշրջանի փակման խօսքը արտասանեց Առաջնորդ Սրբազանը: Ան գնահատանք արձանագրեց շրջանաւարտ կազմերուն՝ անոնց տարած անձնդիր աշխատանքներուն համար, ու շնորհաւորելով նորընտիր կազմերը՝ բարի երթ մաղթեց Կրօնական ժողովին ու Ազգային Վարչութեան: Առաջնորդ Սրբազանը շնորհակալութեան յատուկ խօսք ուղղեց նաեւ շրջանաւարտ Ազգ. Վարչութեան պատուոյ անդամ Տիար Նուպար Չօրպաճեանի, անոր ծառայական աշխատանքին ու զօրակցութեան համար: Ան յոյս յայտնեց, որ թէ՛ Խնամակալ Մարմինը եւ թէ մեր վարժարաններն ու ծխական շրջանները Հայ Դպրոցի Տարին պիտի նշեն արժանավայել ձեւով, մանաւանդ որ Վեհափառ Հայրապետին սրբատառ կոնդակով, 2006 տարին հռչակուած է Հայ Դպրոցի Տարի, իսկ Կրօնական ժողովը պատրաստակամութիւն կը յայտնէ այս գծով նախատեսուած ձեռնարկներուն ու աշխատանքներուն մէջ ունենալու առաջնորդողի դեր: Ան յանուն Կրօնական ժողովին մաղթեց, որ մեր Թեմը մօտիկ ապագային օժտուի նոր երկրորդական վարժարանով մը, մեր եկեղեցիներուն ու վարժարաններուն միջեւ գործակցութիւնը աւելի եւս սերտանայ, իսկ յառաջիկայ Ազգային Վարչութիւնը գործնական նոր քայլեր առնէ, մեր Թեմին մէջ երիտասարդական ու պատանեկան խմբակներու գործունեութեան դիմաց նոր հորիզոններ բանալու եւ զանոնք աշխատանքի աւելի յարմարաւետ պայմաններով օժտելու համար:

Նստաշրջանը փակուեցաւ ժամը 2:30ին, Սրբազան Հօր «Պահպանիչ»ով եւ Կիլիկիա մաղթերգով:

34TH PRELACY NATIONAL REPRESENTATIVES ASSEMBLY CONVENES AT THE NEW PRELACY BUILDING FOR THE FIRST TIME

WESTERN PRELACY NATIONAL REPRESENTATIVES ASSEMBLY
HIGHLY PRAISED THE WORK OF THE PRELATE,
AND RELIGIOUS AND EXECUTIVE COUNCILS

- REPRESENTATIVES CONGRATULATED THE PRELATE ON THE 30TH ANNIVERSARY OF HIS ORDINATION AND HIS 10TH ANNIVERSARY AS PRELATE

- ELECTION OF GENERAL ASSEMBLY DELEGATES, AND RELIGIOUS AND EXECUTIVE COUNCILS

According to our Prelacy tradition, the National Representatives Assembly (NRA) convenes on the third weekend of May.

In keeping with this tradition, the assembly took place from Friday, May 19, to Saturday, May 20, at the "Dickran and Zarouhi Der Ghazarian" Hall of the new Prelacy building, under the auspices of H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, and hosted by St. Sarkis Church, with the participation of delegates, as well as representatives of the Board of Regents, school principals, and parish Board of Trustees by invitation. Also invited and in attendance were representatives from the newly established parish communities of Riverside, La Crescenta, and Las Vegas.

The assembly was comprised of four sessions.

The first session opened on Friday, May 19, at 3:00 p.m. with prayer and requiem service for the departed, specifically for Archbishop Ghevont Chebeyan, and for the sponsors of the hall, Mr. & Mrs. Dickran & Zarouhi Der Ghazarian.

Very Rev. Fr. Muron Aznikian read the letter of blessing from H.H. Aram I, Catholicos of the Great House of Cilicia, directed to the Prelate and the representatives. The Catholicos, in his letter, commended the work of the Prelate and delegates, which He witnessed first hand during His Pontifical visit in October of last year, and wished them success for the future.

Afterward Mr. Khajag Dikjian, member of the Central Executive Council, made remarks in which he commended the previous year's works of the Prelate, and the Religious and Executive Councils as evidenced in the annual reports given to each representative.

Mr. Hrair Balian, Chairman of the Executive Council, briefly spoke of all the endeavors undertaken by the Prelacy in the past year, highlighting the Pontifical visit of His Holiness. He expressed thanks to the parishes and Prelacy friends for contributing to these successes. He then thanked the Prelate and fellow Executive Council members, wishing them all success.

Mr. Sarkis Tatuigian, Chairman of the St. Sarkis Board of Trustees, expressed appreciation on behalf of the St. Sarkis Pastor and Board of Trustees for entrusting them with the task of hosting the assembly.

Mr. Tatuigian subsequently invited the Prelate to deliver his remarks. The Prelate began with welcoming remarks and by giving thanks to our Lord for the successful completion of the previous year's endeavors. He specifically spoke of the Pontifical visit and the progress of the Prelacy building, stressing that these successes are not the result of a few people but rather due to the collaboration between all the parishes and Prelacy friends and sponsors. The Prelate also gave special attention to the work being done by the Christian Education Department and also of the addition of three new parishes to the Prelacy family. He concluded by wishing success to the assembly for the resolution of all the issues on the agenda, giving special attention to issues regarding our schools and education, especially since His Holiness has proclaimed 2006 to be the Year of the Armenian School.

Following the Prelate's remarks the permanent divan was elected, consisting of Chairmen Dr. Garo Agopian and Mr. Roubin Gourjian, and Secretaries Very Rev. Fr. Barthev Gulumian and Mr. Hamo Kasbarian.

Elections then took place for the Resolutions and Election Committee. Elected for the Resolutions Committee were Very Rev. Fr. Muron Aznikian, Mr. Haigaz Terterian, and Mr. Vartan Minassian, and for the Election Committee Mr. Ara Jierian, Mr. Dajad Yeretsian, and Mr. Haroutioun Beshlian.

Before the end of the first session a representative from each parish Board of Trustees, and also from the newly formed parishes, gave brief reports on the activities of their respective church.

The second session opened at 6:30 p.m. of the same day.

Before getting back to the agenda, the Prelate reminded the attendees of the lovely tradition of honoring a dedicated individual at every Representatives Assembly. Prior honorees include Dr. Hagop Der Megerdichian and Brother Krikor Misserlian. He announced that this year, the Executive Council has decided to honor Chairman of the Prelacy Building Committee and Executive Council member Mr. Vahan Bezdikian, who has devoted his time and efforts to the building project even before he became a member of the Prelacy Executive Council. Thus, the Prelate invited Mr. Hrair Balian so that they may together present Mr. Bezdikian with the memento. Mr. Bezdikian expressed sincere thanks on this occasion and graciously accepted the memento on behalf of all the members of the Building Committee.

The Divan then invited Very Rev. Fr. Muron Aznikian to say a few words. He announced that this year's assembly coincides with the 30th anniversary of the Prelate's ordination and his 10th anniversary as Prelate. He briefly recounted the Prelate's service over the past 30 years and expressed congratulations and best wishes on behalf of all those present. He then announced that on this occasion, Mr. Ghazaros Ghazarossian, a delegate from Holy Martyrs Church, would like to present the Prelate with a ring.

Mr. Hrair Balian and Mr. Khajag Dikijian congratulated the Prelate and expressed their best wishes, after which the Prelate articulated his sincere thanks to all, but especially to Mr. Ghazarossian, and highly commended the work of all the parishes and delegates, hoping that in this Year of the Armenian School that we would be blessed with a new secondary school.

The assembly then returned to the agenda, with the presentation of the Prelacy financial report, and the reports of the Auditing Committee, Board of Regents, and CASPS (Committee for Armenian Students in Public Schools).

ELECTION OF DELEGATES TO THE GENERAL ASSEMBLY

Taking into account that the General Assembly of the Catholicosate will take place in October of this year, the assembly had on its agenda the election of delegates to the General Assembly.

The representatives elected as delegates Mr.'s Khajag Dikijian, Hrair Balian, Armand Keosian, Peklar Pilavjian, Dr. Hagop Der Megerdichian, Vahan Bezdikian, Garbis Bezdjian, Boghos Sassounian, Hagop Yedalian, Garo Avakian, Noubar Demirjian, Dr. Hagop Dickranian, Dr. Garo Agopian, Khatchig Yeretsian, and Deacon

Mark Shirin. The substitute delegates are Mr.'s Krikor Sulahian, Sarkis Kitsinian, and Vartan Minassian.

The second session came to a close at 10:15 p.m.

ELECTION OF RELIGIOUS AND EXECUTIVE COUNCILS

The second half of the National Representatives Assembly began on the morning of Saturday, May 20, and concluded at 3:00 p.m.

Among the various items on the agenda was the by-laws of Prelacy schools. The assembly decided that a special session would convene in four months to further examine and analyze the by-laws.

Subsequently, the election of the Religious and Executive Councils took place along with the election of the Auditing Committee.

The newly elected Religious Council consists of Very Rev. Fr. Muron Aznikian, Very Rev. Fr. Barthev Gulumian, Rev.'s Vahan Gosdanian, Vazken Atmajian, Ardak Demirjian, Razmig Khatchadourian, and Gomidas Torossian.

The newly elected Executive Council consists of Mr.'s Boghos Sassounian, Dr. Hagop Der Megerdichian, Garbis Bezdjian, Vahan Bezdikian, Garo Avakian, Dr. Garo Agopian, Dr. Navasart Kazazian, Nerses Melkonian, Vahe Hovaguimian, Varoujan Der Simonian, and Mher Der Ohanessian.

Elected for the Auditing Committee were Mr.'s Roubin Gourjian, Garo Eshgian, and Zareh Markarian.

On behalf of the Divan, Dr. Garo Agopian thanked the attendees for another fruitful Representatives Assembly and wished the newly elected committee success.

Closing remarks were made by the Prelate, who commended the activities of the previous Religious and Executive Councils and wished success to the newly elected councils and committees. He also thanked and commended honorary Executive Council member Mr. Noubar Chorbajian for his many years of service and support. Turning his attention to our schools, the Prelate expressed hope that our parishes and schools will do their best to honor our schools ceremoniously, especially being that His Holiness proclaimed 2006 to be the Year of the Armenian School, and also expressed hope that we would be blessed with a new secondary school in the near future. The Prelate also hoped for a closer bond between our churches and schools and for more emphasis to be placed on our youth groups.

The 34th National Representatives Assembly came to a close at 2:30 p.m. with the Prelate's "Bahbanich" prayer and the collective singing of "Giligia".